ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԾԳՀ-ԾՁԲ-2018/1

ք. Երևան

«18» 09 2018թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ը, ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ֆլեշ Մոտորս»** ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Ա.Լալայանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2,473,700 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 և կցվող N 1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
ՀՎՀՀ՝ 00846441	ՀՎՀՀ՝ 00873228
ՀՀ՝ 900000900283	ՀՀ՝ 1510012745550100
Գործադիր տնօրեն	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Աշոտ Կիրակոսյան	Տնօրեն
	Ա.Լալայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«ՊՄԳՀ-ԾՀԲ-2018/1» 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111110/6	Տես կցվող հավելված 1	դրամ	2,473,700	1	ՀՀ ք.Երևան, Ուլնեցի 31	Պայմանագրի կնքման պահից մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը

Գնային առաջարկին կից պետք է ներկայացնել լրացված կցվող հավելվածը:
Կցված հավելվածի բոլոր տողերը անհրաժեշտ է լրացնել:

Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն հինգ ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ առնվազն մեկից-հինգ օրացուցային օրվա ընթացքում/կախված ավտոմեքենայի անսարքությունից/, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Տեխսպասարկման կայանում տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի արտահերթ:

Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա նվազագույնը 7 բոքսեր ավտոմեքենաների վրա միաժամանակ աշխատելու հնարավորություն: Կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ունենա էլեկտրոնային և էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու համար, դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում նաև ալյումինի և չուգունի, ներկման, չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ, կատարվող աշխատանքների վրա ինժեներական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն:

Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա վերոնշյալ նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխսպասարկում կատարելու բոլոր միջոցները:

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն այլ երկրների արտադրության ավտոմոբիլների, որից

Toyota LC-Prado-4.0 **1 հատ**

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է SU – 1 ներառվող ծառայությունների անվանում / տեխ. գնում ըստ հավելված Ա-ի/

SU – 2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները/ ըստ հավելված Բ-ի/:

- Օգտագործվող պահեստամասերը պերք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
- **Մասնակիցը պետք է հավաստի,որ**

Ունի ավտոտեխնիկական սպասարկման կայան Երեւանում, որը կահավորված է ավտովերանորոգման համապատասխան սարքավորումներով /ամբարձիչներ, վուլկանացնող և կարգավորող սարքեր, ախտորոշիչ սարքեր և այլն/

Վերանորոգման ներկայացված ավտոմեքենան դիագնոստիկ զննման պետք է ենթարկվի ներկայացված օրը և մեկօրյա ժամկետում Պատվիրատուին հայտնի տեղեկատվություն վերանորոգման վերաբերյալ:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 ՀՎՀՀ՝ 00846441 ՀՀ՝ 900000900283 Գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյան	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31 ՀՎՀՀ՝ 00873228 ՀՀ՝ 1510012745550100 Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ Տնօրեն Ա.Լալայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 2
«ՊՄԳՀ-ԾՀԲ-2018/1» 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	50111110/6	Ավտոմոբիլային պարկի վերանորոգման եւ պահպանման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	2,473,700	2,473,700	2,473,700	2,473,700	2,473,700

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամորտական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ 00846441
ՀՀ՝ 900000900283
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
ՀՎՀՀ՝ 00873228
ՀՀ՝ 1510012745550100
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Տնօրեն
Ա.Լալայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«ՊՄԳՀ-ՄՀԲ-2018/1» 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«ՊՄԳՀ-ԾՀԲ-2018/1» 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 1

SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումներ		Toyota LC-Prado-4.0
1	2	3
Հավելված Ա		
SU-1 ներառվող ծառայությունների անվանում		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1	Բոնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	Կարգավորիչ փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
	1. Շարժիչ	
18	Շարժիչի հանում և տեղադրում	50000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
22	Շարժիչի վերանորոգում	250000
23	Նույնը DOHC դեպքում	0
24	Նույնը V6-ի դեպքում	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	20000
26	Բլիսեռի կափարիչի հանում և տեղադրում	20000
27	Նույնը աջի համար (V6)	0
28	Նույնը ձախի համար (V6)	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	40000
30	Նույնը աջի համար (V6)	0
31	Նույնը ձախի համար (V6)	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	30000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	50000
34	Փականի խցուկի փոխարինում	10000
35	Նույնը V6-ի դեպքում	0
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	0
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0
39	Նույնը DOHC դեպքում	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	25000
41	Հրիչների փոխարինում SOHC	15000
42	Նույնը DOHC դեպքում	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	45000
44	Նույնը DOHC դեպքում	0
45	Նույնը V6-ի դեպքում	0
46	Ծկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
48	Նույնը DOHC դեպքում	0

49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
50	Նույնը V8-ի դեպքում	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
52	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	25000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
54	Միջոցային օղակների փոխարինում	60000
55	Նույնը DOHC դեպքում	0
56	Նույնը V8-ի դեպքում	0
57	Թափանիվի հանում և տեղադրում	30000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	5000
59	Յուղի պոմպի փոխարինում	1000
60	Նույնը DOHC դեպքում	0
61	Նույնը V8-ի դեպքում	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5000
63	Բոնկման կարգավորում	5000
64	CO կարգավորում	5000
65	Խարնարակի հանում և տեղադրում	0
66	Խարնարակի վերանորոգում	0
67	Օդի զտիչի փոխարինում	5000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	6000
70	Բենզամղիչի փոխարինում	12000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	12000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	3000
73	Տրամլրոի հանում և տեղադրում	0
74	Տրամլրոի վերանորոգում	0
75	Սրահի զտիչ փոխարինում	8000
3. Սառեցման և արտածման համակարգ		
76	Հովհարի փոկի հանում և տեղադրում	8000
77	Հովհարի հանում և տեղադրում	15000
78	Ռադիատորի հանում և տեղադրում	18000
79	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
80	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
81	Ռադիատորի վերանորոգում	50000
82	Թերմոստատի փոխարինում	20000
83	Ջրի պոմպի փոխարինում	30000
84	Նույնը DOHC և V-6 դեպքում	0
85	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
86	Ջրի պոմպի վերանորոգում	0
87	Նույնը DOHC դեպքում	0
88	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
89	Ընդարձակող բաքի փոխարինում	5000
90	Խլարարի հանում և տեղադրում	5000
91	Նույնը DOHC դեպքում	0
92	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
93	Բանվ. կամ գլխ. զլանի հանում և տեղադրում	5000
94	Բանվ. կամ գլխ. զլանի վերանորոգում	5000
95	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0
96	Կցորդման ուտնակի հանում և տեղադրում	0
97	Կցորդման ձուլանի հանում և տեղադրում	0
98	ՓՏ-ի հանում և տեղադրում	0
99	ՓՏ-ի վերանորոգում	0
100	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0
101	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0
102	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	5000
103	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	50000
104	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	50000
105	Նույնը V8-ի հաշար	0

106	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	50000
107	Նույնը VE-ի համար	0
108	ԱՓՏ-ի վերանորոգում	300000
109	Նույնը VE-ի համար	0
110	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	50000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	25000
112	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	80000
113	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	15000
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	20000
115	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	15000
116	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	15000
117	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	10000
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
118	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	20000
119	Առջևի կամ հետևի կամրջ. լիկվատար քանդում և հավաքում	0
120	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	0
121	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստռու հանում և տեղադր.	15000
122	Կիսաստռու առանցքակալի փոխարինում	15000
	7. Կախոց	
123	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	5000
124	Տրավերսի հանում և տեղադրում	25000
125	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	15000
126	Անվակունջի առանցքակալի փոխարինում	15000
127	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
128	Հետևի անվակունջի առանցքակալի փոխարինում	15000
129	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
130	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	15000
131	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	13000
132	Ցնցամեղմիչի թաթակի փոխարինում	7000
133	Ռեզինակի հանում և տեղադրում	2000
134	Ռեզինակի հանում և տեղադրում	5000
135	Ռեզինակի վռանների փոխարինում	5000
136	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8000
137	Ներքևի լծակի հանում և տեղադրում	9000
138	Ներքևի լծակի վռանների փոխարինում	12000
139	Առջևի աջ կամ ձախ ծգանների հանում և տեղադրում	5000
140	Միջին ծգանի հանում և տեղադրում	8000
141	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	4000
142	Վերևի լծակի հանում և տեղադրում	8000
143	Վերևի լծակի վռանների փոխարինում	14000
144	Գնդե հոդակապերի փոխարինում	8000
145	Ճայռակաների հանում և տեղադրում	5000
146	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3000
147	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	8000
148	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	7000
149	Հետևի զսպանակի փոխարինում	0
150	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8000
151	Հետևի ծգածողի հանում և տեղադրում	11000
152	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	12000
153	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	8000

154	Հետևի անկյունացծային լծակի հանում և տեղադրում	7000
155	Անկյունացծային լծակի վոսանների փոխարինում	6000
156	Անվաթաղի կարագավորում	9000
157	Ձողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	5000
	8. Ղեկային մեխանիզմ	
158	Ղեկային կալունի հանում և տեղադրում	30000
159	Նույնը ՎԵ-ի համար	0
160	Ղեկային կալունի վերանորոգում	65000
161	ՂԿ-ի առանցքակալի և կոկան վոսանների փոխարինում	15000
162	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	5000
163	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	15000
164	Նույնը DOHC դեպքում	0
165	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	10000
166	Նույնը DOHC դեպքում	0
167	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	2000
168	Նույնը DOHC դեպքում	0
169	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
170	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
171	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
	9. Արգելակային համակարգ	
172	Գլխ. գլանի հանում և տեղադրում	5000
173	Գլխ. գլանի վերանորոգում	5000
174	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5000
175	Բանվ. գլանի հանում և տեղադրում	5000
176	Բանվ. գլանի վերանորոգում	5000
177	Արգելակային համակարգի օդահանում	5000
178	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	8000
179	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	8000
180	Առջևի սուպպորտի վերանորոգում	8000
181	Հետևի սուպպորտի վերանորոգում	8000
182	Արգելակային փողրակի փոխարինում	3000
183	Առջևի արգելակային կոնդակների փոխարինում	8000
184	Հետևի սկավառակային կոնդակների փոխարինում	8000
185	Հետևի կոնդակների փոխարինում	0
186	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	8000
187	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	8000
188	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	3000
189	ABS-ի հանում և տեղադրում	5000
190	ABS-ի վերանորոգում	5000
191	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	3000
192	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	5000
	10. Էլեկտրասարքավորում	
193	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10000
194	Ճափիչ սարքերի հանում և տեղադրում	5000
195	Գեներատորի հանում և տեղադրում	10000
196	Նույնը ՎԵ-ի դեպքում	0
197	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
198	Գեներատորի վերանորոգում	15000
199	Մեկնարկիչի հանում և տեղադրում	12000
200	Մեկնարկիչի վերանորոգում	10000
201	Առջևի լապտերի հանում և տեղադրում	3000
202	Հետևի լապտերի հանում և տեղադրում	3000
203	Բռնկման կոդպեքի հանում և տեղադրում	5000
204	Կազքաչափի հանում և տեղադրում	2000

205	Կազքաշափի ճոպանի հանում և տեղադրում	1000
206	Սաքերի պանելի հանում և տեղադրում	15000
207	Կուազաչափի հանում և տեղադրում	1000
208	Ազդանշանի հանում և տեղադրում	1000
209	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	1000
210	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	2000
211	Ազդանշանային հանակարգի տեղադրում	2000
212	Մագնիտոլայի տեղադրում	2000
213	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	5000
214	Էլ/հաղորդալարերի ճանապարհի վերանորոգում	5000
215	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	5000
216	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	5000
217	Էլեկտրական տվիչների փոխարինում	5000
218	Էլեկտրական անջատիչների փոխարինում	5000
219	Վառոցքի մոմերի փոխարինում	6000
220	Կոնդիցիոների լիցքավորում	20000
221	Կոնդիցիոների վերանորոգում	20000
	11. Այլ ծառայություններ	
222	Ավտոմեքենայի բաքի հոկում և ներկում ցին 1 քառ.դմ - ի համար	5000
223	Անիվի հանում և տեղադրում	1500
224	Անվադողի վերանորոգում	1500
225	Անիվի բալանսավորում	2000
226	Անիվի վալց	2000
227	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար*	5000
228	Խառատային աշխատանքներ	10000
229	Փականագործի աշխատանքներ	10000

Հավելված Բ

SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
	1.Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	25000
2	Շարժիչի գլխիկ	25000
3	Բարձիկ	50000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	20000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	50000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
7	Շարժիչի փական դուրս մղող	5000
8	Շարժիչի փական ներս մղող	5000
9	Շարժիչի փականի խցուկ	5000
10	Ծնկաձև լիսեռ	20000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	5000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	5000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	5000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	5000
15	Հենակային տակիրակ	5000
16	Մխոց	5000
17	Մխոցային օղակներ	20000
18	Ատամնանիվ	5000
19	Ատամնավոր փոկ	40000
20	Շղթա	15000
21	Հիդրոծգան	10000
22	Հոսք	13000
23	Հիդրոտիրիչ	18000
24	Բաշմակ	15000
25	Հանգստարար	25000
26	Թափանիվ	50000
27	Թափանիվի պսակ	20000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	5000
29	Շկիվ	5000

30	Շարժաթև	5000
31	Կարտերի միջադիր	5000
32	Միջադիր	10000
2.Դեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լ/հոդ	6000
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լ/հոդ	8000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լ/հոդ	10000
36	Յուղի զտիչ	10000
37	Յուղի պոմպ	20000
38	Յուղի պոմպի շարժաբեր	5000
39	Յուղի ռադիատոր	15000
40	Յուղի փողրակ	5000
41	Յուղի ծորակ	10000
42	Վառոցքի մոմ	15000
43	Բենզոբաք	5000
44	Խաոնարակ	0
45	Խաոնարակի վերանորոգման հավաքածու	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	40000
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	45000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0
49	Վառելանյութի զտիչ	30000
50	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	5000
51	Վառելանյութի փողրակ	2000
52	Աքսելերատորի ճոպան	0
53	Օդի զտիչ	15000
54	Ջերմաստիճանային տվիչ	20000
55	Յուղի տվիչ	15000
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	30000
57	Օդի ծախսի տվիչ	30000
58	Արագաչափի տվիչ	20000
59	Հովիարի տվիչ	20000
60	Ջրի տվիչ	15000
61	Բենզոբաքի տվիչ	15000
62	Մարման ընթացքի կարգավորիչ	10000
63	Մարման ընթացքի տվիչ	25000
64	Դեկավարման համակարգիչ	50000
65	Պարապ ընթացքի տվիչ	15000
66	Դրոսելային փականի տվիչ	20000
67	Թթվածնի տվիչ	25000
68	Սրտի զտիչ	15000
3. Սառեցման և արտածման համակարգ		
69	Հովիարի փոկ	10000
70	Հովիար	15000
71	Ռադիատոր	70000
72	Ընդարձակող բաք	20000
73	Ռադիատորի փողրակ	5000
74	Ջերմաստատ	25000
75	Ջրի պոմպ	40000
76	Ջրի պոմպի առանցքակալ	12000
77	Ջրի պոմպի թակ	13000
78	Սառեցման հեղուկ 1 լ/հոդ	6000
79	Ջրի պոմպի սոնակիվ	1000
80	Հոլովակ	5000
81	Փոկ	5000
82	Փոկ կոնդիցիոների	12000
83	Ծորակ	3000
84	Խլարարի ներդիր	5000
85	Խլարարի կախոց	3000
86	Կրոնշտեյն	2000
87	Անուր (խաձուտ)	1000
88	Խլարար	5000
89	Ռեզոնատոր	0
90	Վառարանի ռադիատոր	40000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
91	Կցորդման բանկիրական գլան	0
92	Կցորդման գլխավոր գլան	0

93	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0
94	Կցորդման տանող սկավառակ	0
95	Կցորդման տարվող սկավառակ	0
96	Կցորդման առանցքակալ	0
97	Կցորդման փողրակ	0
98	Փոխանցման տուփ	0
99	ՓՏ-ի աջակի խցուկ	0
100	ՓՏ-ի հետևի խցուկ	0
101	ՓՏ-ի առանցքակալ	0
102	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
103	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0
104	ՓՏ-ի եղանիկ	0
105	ՓՏ-ի ատամնանիվ	0
106	Համաժամիչ	0
107	Մուֆտ	0
108	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0
109	ԱՓՏ-ի գլխիչ	25000
110	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	50000
111	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	300000
112	Տրանսմիսիոն յուղ. *1 լիտր*	8000
113	ԱՓՏ յուղ. *1 լիտր*	10000
114	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
115	Հերմետիկ	8000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
116	Բաշխիչ տուփ	15000
117	Բաշխիչ տուփի խցուկ	5000
118	Բաշխիչ տուփի առանցքակալ	13000
119	Բաշխիչ տուփի ատամնանիվ	3000
120	Բաշխիչ տուփի լիսեռ	3000
121	Կարդանային լիսեռ	15000
122	Էլաստիկ մուֆտ	15000
123	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	15000
124	Կարդանային լիսեռի խաչուկ	15000
	6. Աջակի և հետևի կամրջակներ	
125	Հետևի կամ աջակի կամրջակ	0
126	Ռեդուկտոր	20000
127	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
128	Դիֆերենցիալ	0
129	Դիֆֆերենցիալի սատելիտ	0
130	Տանող ատամնանիվի խցուկ	0
131	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
132	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0
133	Կիսառանի	0
134	Կիսառանու առանցքակալ	20000
135	Կիսառանու միջադիր	5000
136	Կիսառանու խցուկ	10000
137	Կարգավորիչ տափողակ	2000
	7. Կախոց	
138	Տրավերս	0
139	Կրոնշտեյն	5000
140	Չախ կամ աջ հոդակապ	70000
141	Չախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	10000
142	Անվակունդ	50000
143	Անվակունդի խցուկ	25000
144	Անվակունդի ներքին առանցքակալ	15000
145	Անվակունդի արտաքին առանցքակալ	0
146	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	15000
147	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0
148	Չախ կամ աջ հոդակապի խցուկ	10000
149	Հարվածամեղմիչի թասակ	25000
150	Ցապանակ	0
151	Առջևի հարվածամեղմիչ	50000
152	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10000
153	Հարվածամեղմիչի վոան	10000
154	Ներքևի լծակ	40000

155	Ներքևի լծակի վռան	8000
156	Վերևի լծակ	40000
157	Վերևի լծակի վռան	8000
158	Գնոմ հոդակապ	15000
159	Առջևի կայունարար	0
160	Առջևի կայունարարի վռան	10000
161	Առջևի կայունարարի առջևի վռան	5000
162	Հետևի զսպանակ	0
163	Հետևի ցնցամեղմիչ	40000
164	Հետևի մետաղաձող (շտանգա)	0
165	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	5000
166	Հետևի անկյունագծային լծակ	5000
167	Անկյունագծային լծակի վռան	5000
168	Ցնդակ (ռեստորա)	0
169	Ցնդակի վռան	0
170	Ցնդակի միջադիր	0
171	Ցնդակի բռնիչ	0
172	Աջ կամ ձախ ծգան	0
173	Ծայրակալ	5000
174	Ծգան մեջտեղի	15000
175	Անվահեծ	45000
	8. Ղեկային մեխանիզմ	
176	Ղեկային կալուն	100000
177	Ղեկային կալունի առանցքակալ	15000
178	Ղեկային կալունի խայուկ	15000
179	Հիդրոուժեղարար	25000
180	Հիդրոուժեղարարի փոկ	10000
181	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	0
182	Հիդրոուժեղարարի պոմպ	15000
183	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0
184	Ղեկային ձող	20000
185	Ղեկային ձողի ծայրակալ	10000

186	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լ/հայ	8000
187	Ճոճանակ	0
188	Ճոճանակի վոան	0
	9. Արգելակային համակարգ	
189	Գլխ. գլան	15000
190	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	15000
191	Վակուումային ուժեղարար	20000
192	Բանվ. գլան	0
193	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
194	Արգելակային փողրակ	8000
195	Սուպորտի ուղղորդիչ	8000
196	Սուպորտի մանժետ	8000
197	Աջակի արգելակային կոճղակների կոմպլեկտ	40000
198	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	40000
199	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	20000
200	Աջակի արգելակային սկավառակ	40000
201	Հետևի արգելակային սկավառակ	40000
202	Ձեռքի արգելակի ճոպան	5000
203	ABS-ի տվիչ	15000
204	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	0
205	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	5000
206	Ձեռքի արգելակի ճոպան	0
	10. Էլեկտրասարքավորում	
207	Գեներատոր	80000
208	Գեներատորի դիոդային կամրջակ	20000
209	Գեներատորի ռելե	15000
210	Գեներատորի առանցքակալ	15000
211	Ստարտեր	80000
212	Ստարտերի ռելե	20000
213	Ստարտերի աճուխ	15000
214	Բենդեքս	17000
215	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	18000
216	Աջակի լապտեր	20000
217	Աջակի թարթիչ	5000
218	Հետևի լապտեր	20000
219	Հետևի թարթիչ	5000
220	Արգելակային լապտեր	15000
221	Լամպ	10000
222	Էլեկտրական անջատիչ	5000
223	Էլեկտրական տվիչ	5000
224	Էլեկտրական յաչիկ սարք	0
225	Բռնկման կոդափոք	5000
226	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	10000
227	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	8000
228	Վառոցքային լարերի խուրց	30000
229	Վառոցքի մոմի ծայրակալ	5000
230	Վազքալափ	0
231	Վազքալափի ճոպան	0
232	Արագալափ	0
233	Ազդանշան	0
234	Ապակեմաքրիչ	5000
235	Ապակեմաքրիչի շարժիչ	5000
236	Դռների կենտրոնական փական	5000
237	Ազդանշանային համակարգ	5000
238	Սազնիտոլա	0
239	Էլեկտրաամբարձիչ	25000
240	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	20000
241	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր ՀՀՇ /ՀՀՄ կնդանդրշված համար	5000
	Ընդամենը ծառայություններ	**2425000**
	Ընդամենը ապրանքներ	**3453000**
	Ընդամենն ըստ չափաբաժնի	**5878000**

Հավելված 8
«ՊԾԳՀ-ԾՀԲ-2018/1» ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «____»_____ 2018թ.**

«Ֆիլֆ Մոտորս» ՍՊԸ-ն դեմս Ընկերության տնօրեն Ալեքսանդր Լալայանի (նույնականացման քարտ 002741999, տրված 01.06.2015, 004 կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՊԾԳՀ-ԾՀԲ-2018/1 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /Վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /20/12/2018 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ք. Երևան, Ռուբինյանց փ. 31.
«Արարատբանկ» ԲԲԸ
Ընկերության Հ/Հ 1510012745550100
Ընկերության ՀՎՀՀ 00873228
Տնօրեն՝ Ա. Լալայան

17 / 11/ 2018

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղադրում հրապարակելը:*

*** լրացվում է մասնակցի կողմից*

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1]
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Արարատբանկ» ԲԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 1510012745550100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00873228	
8. Վճարողի ՀՄՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
10. Շահառուի ՀՄՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝00846441	
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)900000900283	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 247,370 /երկու հարյուր քառասունյոթ հազար երեք հարյուր յոթանասուն/	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ << դրամ / AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առցիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ.
24.գ "___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն իրավիրով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*